

**ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵՁՎԻ ՊԱՅԹԱԿԱՆ
ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ՄԱՆՎԵԼ ԱՍԱՏՐՅԱՆ

Ինչպես հայտնի է, գրաբարն ունի պայթական բաղաձայնների եռաստիճան համակարգ հետևյալ տեսքով.

Ձայնեղ	Խուլ	Շնչեղ խուլ
Բ	Պ	Փ
Գ	Կ	Ք
Դ	Տ	Թ
Չ	Մ	Ց
Ջ	Շ	Ջ

Վարկած կա այն մասին, որ գրաբարյան Բ, Գ, Դ, Չ, Ջ տառերով արտահայտված հնչյունները եղել են շնչեղ ձայնեղներ¹, և, ասինք, հին հայերենում բերել, գետ, դաշտ, ձավար, ջուր բառերն արտասանվել են բ'երել, գ'ետ, դ'աշտ, ձ'ավար, ջ'ուր, ինչպես որ այժմ արտասանվում են Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում:

Քանի որ այս վարկածը, մեր կարծիքով, հնարավոր չէ ո՛չ ապացուցել, ո՛չ մերժել, ուստի, հետևելով ավանդական տեսակետին, ելնում ենք նրանից, որ գրաբարյան պայթականների եռաստիճան հակադրության մեջ Բ, Գ, Դ, Չ, Ջ տառերով արտահայտված հնչյունները եղել են պարզ ձայնեղներ և արտասանվել են այնպես, ինչպես որ արևելահայ գրական լեզվում դրանք արտասանվում են բերել, գետ, դաշտ, ձավար, ջուր բառերի մեջ, իսկ Պ, Կ, Տ, Մ, Շ, և Փ, Ք, Թ, Ց, Ջ տառերով արտահայտված հնչյունները համապատասխանաբար եղել են խուլեր և շնչեղ խուլեր՝ արտասանվելով այնպես. ինչպես որ արևելահայ գրական լեզվում դրանք արտասանվում են պատ, կաթ, տատ, ծառ, ճակատ, փայտ, քար, թեթև, ցուրտ, չամիչ բառերի մեջ:

Գրաբարյան պայթական բաղաձայնների այս եռաստիճան համակարգը հայերենի բարբառներում որոշակի օրինաչափ, համակարգաչին, համարյա բացառություներ չձանաչող փոփոխությունների է ենթարկվում²: Այդ փոփո-

¹ Գրաբարի պայթական բաղաձայնների մասին եղած նորագույն կարծիքները տե՛ս Դ. Ժաուկյան, К вопросу о происхождении консонантизма армянских диалектов («Вопросы языкознания», *այսուհետև՝* ВЯ, 1960, № 6); В. Жирмунский, Некоторые итоги дискуссии об армянском консонантизме, ВЯ, 1962, № 5; В. Пизани, Об армянских отражениях индоевропейских взрывных, ВЯ, 1961, № 4; Ф. Фейди, Замечки по армянскому консонантизму, ВЯ, 1961, № 5; Х. Фогт, Замечки по армянскому консонантизму, ВЯ, 1961, № 3; Ж. Фурке, Генезис системы согласных в армянском языке, ВЯ, 1959, № 6.

² Այս և հետագա շարադրանքը հմմտ. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 57—63:

խուժյունները, որպես կանոն, հատկապես հետևողականորեն գործում են բառասկզբում՝ գրաբարի հետ ընդհանուր բառերի մեջ: Ահա այդ օրինաչափությունն էլ իրավացիորեն հիմք է հանդիսացել, որ հայ բարբառների միահատկանիշ հնչյունաբանական դասակարգման համար ելակետ ընդունվի պայթական բաղաձայնների համակարգը³:

Հայերենի բարբառներում փոփոխությունների են ենթարկվում գրաբարյան ձայնեղների և խուլերի շարքերը միայն:

Բարբառների մի խմբում գրաբարյան ձայնեղները վերածվում են խուլերի, իսկ վերջիններս մնում են անփոփոխ, այսինքն՝ $P > \Phi$, $\eta > \eta$, $\varphi > \varphi$, $\chi > \chi$ և այլն: Այս երևույթը կոչվում է բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժ:

Բարբառների մյուս խմբում գրաբարյան խուլերը վերածվում են ձայնեղների, իսկ ձայնեղներն էլ իրենց հերթին կարող են վերածվել շնչեղ ձայնեղների, այսինքն՝ $\eta > P$, $P > P$ կամ $P > P'$, Այս երևույթը կոչվում է բաղաձայնական համակարգի երկրորդ տեղաշարժ:

Բարբառների երրորդ խմբում գրաբարյան ձայնեղները վերածվում են խուլերի կամ շնչեղ խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների. այսինքն՝ այս երևույթն առաջին և երկրորդ տեղաշարժերի միաժամանակյա առկայությունն է միևնույն բարբառում, ինչպես՝ $P > \eta$ կամ Φ , $\eta > P$, $\gamma > S$ կամ θ , $S > \gamma$ և այլն: Պայթական բաղաձայնների համակարգի այսպիսի շրջումը կոչվում է տեղաշարժ-տեղափոխություն:

Եվ վերջապես, բարբառների չորրորդ խմբում գրաբարյան պայթական բաղաձայնների համակարգը փոփոխությունների չի ենթարկվում, այսինքն՝ ձայնեղները մնում են ձայնեղ, խուլերը՝ խուլ. $P > P$, $\eta > \eta$, $\varphi > \varphi$, $\chi > \chi$ և այլն: Պայթական բաղաձայնների այսպիսի անփոփոխ, անտեղաշարժ համակարգը պայմանականորեն կարելի է կոչել դասական:

Գրաբարյան պայթական բաղաձայնների՝ հայերենի բարբառներում կրած փոփոխությունները ներկայացնելիս խոսք եղավ միայն ձայնեղների և խուլերի փոփոխությունների մասին: Իսկ այս տեսակետից ինչպիսի՞ն է շնչեղ խուլերի դրույթները:

Նկատելի է, որ հայերենի բոլոր բարբառներում անխտիր շնչեղ խուլերի շարքը բառասկզբում մնում է կայուն ու անփոփոխ, և, ըստ այդմ, ասենք, փայտ, քար, քաց, ցուրեն, շառ և նման բառերի Φ , P , θ , β , ϑ շնչեղ խուլերը բարբառներում ոչ մի փոփոխության չեն ենթարկվում: Իսկ ինչ վերաբերում է բառամիջի և բառավերջի շնչեղ խուլերին, ապա այս դիրքերում ևս շնչեղ խուլերը, որպես կանոն, մնում են անփոփոխ: Այս տեսակետից բացառություն են կազմում առանձին բարբառներ, օրինակ՝ Սասունի և Մշո բարբառները, որոնցում բառամիջի և բառավերջի շնչեղ խուլերը շնչեղազրկվելով վերածվում են խուլերի, այսինքն՝ Φ , P , θ , β , ϑ հնչյունները վերոհիշյալ դիրքերում դառնում են η , χ , S , ψ , Z : Այս նույն փոփոխության են ենթարկվում նաև գրաբարյան ձայնեղներից առաջացած շնչեղ խուլերը, ինչպես՝ ալֆ > աճկ, եթ > ետե, ափսո > ափսո, աբ > աբ, բար > բար, օ > օգ > օծ, հոգի > հոգի > հոգի, խաբել > խափել > խապել, իջնել > իջնել > իճնել, կարագ > կարագ > կարակ և այլն:

³ Նույն տեղում:

ինչևիցե, շնչեղ խուլերի խլացումը կամ ընդհանրապես փոփոխությունը հայերենի համար տիպական երևույթ չէ և մնում է որպես խիստ տեղային, մի քանի բարբառների հատուկ առանձնահատկություն: Եվ եթե հաշվի չառնենք շնչեղ խուլերի խիստ տեղայնացած վերոհիշյալ փոփոխությունը, ընդհանրապես կարող ենք ասել, որ հայերենի պայթականների շնչեղ խուլերի շարքը հնագույն շրջանից սկսած մինչև այսօր եղել է խիստ կայուն: Այս տեսակետից բավական է հիշել միայն այն, որ գրաբարը հնդեվրոպական հիմնալեզվի համեմատությամբ կատարելով մի լրիվ տեղաշարժ դեպի աջ, այսինքն՝ հնդեվրոպական շնչեղ ձայնեղները վերածելով ձայնեղների, ձայնեղները՝ խուլների, խուլերը՝ շնչեղ խուլերի, շնչեղ խուլերի շարքը պահել է անվթար, ինչպես՝ հնդեվ. bh, gh, dh > b, g, d, b, g, d > p, k, t, p, k, t > ph, kh, th, իսկ հնդեվ. ph, kh, th > ph, kh, th:

Ինչպես հայտնի է, ետգրաբարյան շրջանում բարբառների մի զգալի մասում շնչեղ խուլերի են վերածվել գրաբարյան ձայնեղներն ընդհանրապես, այսինքն՝ Բ, Գ, Դ, Զ, Զ > Փ, Ք, Թ, Յ, Զ, իսկ խուլերն էլ վերածվել են ձայնեղների՝ Պ, Կ, Տ, Մ, Ծ > Բ, Գ, Դ, Զ, Զ, և, այսպիսով, ստացվել է երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ՝ Բ—Փ, Գ—Ք, Դ—Թ և այլն: Բաղաձայնական այս համակարգն ունեն Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոգոսթոյի և մի քանի այլ բարբառներ ու արևմտահայ գրական լեզուն:

Ասացինք, որ բարբառների չորրորդ խումբն ունի դասական կամ եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ, այսինքն՝ գրաբարյան պայթականների շարքերը փոփոխությունների չեն ենթարկվում՝ ձայնեղները մնում են ձայնեղ, խուլերը՝ խուլ Բ, Գ, Դ, Զ, Զ > Բ, Գ, Դ, Զ, Զ. Պ, Կ, Տ, Մ, Ծ > Պ, Կ, Տ, Մ, Ծ. օրինակ՝ բերել > բերել, գետ > գետ, դաշտ > դաշտ, ձավար > ձավար, ջուր > ջուր, պատ > պատ, կաթ > կաթ, տուն > տուն, ծառ > ծառ, հակառ > հակառ: Անտեղաշարժ գրաբարյան բաղաձայնական համակարգ ունեն, օրինակ, Թիֆլիսի, Ագուլիսի, Մեղրու, Կարճևանի, Արդվինի բարբառները և Արարատյան բարբառի որոշ խոսվածքներ: Եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ ունի արևելահայ գրական լեզուն, իսկ սա նշանակում է, որ արևելահայ գրական լեզվի պայթական բաղաձայնների համակարգը հիմնված է վերոհիշյալ բարբառախմբի վրա, մասնավորապես՝ Արարատյան բարբառի վրա:

Արևելահայ գրական լեզվին վերագրելով գրաբարատիպ անտեղաշարժ բաղաձայնական համակարգ՝ նկատի ենք առնում բառասկիզբը: Եվ իրոք, եթե հաշվի չառնենք առանձին բացառությունները, օրինակ՝ գղալ > քալ, բղել > փրքել, որոնք բարբառային արտասանության ազդեցության արդյունք են, ապա, որպես ընդհանուր օրինաչափություն, արևելահայ գրական լեզվում գրաբարյան բառասկզբի ձայնեղ պայթականներին համապատասխանում են ձայնեղ պայթականները, խուլերին՝ խուլերը, իսկ շնչեղ խուլերը, ինչպես արևելահայ գրական լեզվում, այնպես էլ բոլոր բարբառներում մնում են անփոփոխ:

Այսպես լուծելով պայթական բաղաձայնների բառասկզբի արտասանության հարցը՝ անցնենք նրանց բառամիջի և բառավերջի արտասանության պարզաբանմանը: Երբ խոսում ենք արևելահայ գրական լեզվի պայթական բաղաձայնների գրության և արտասանության տարբերությունների մասին, խոսքը փաստորեն խուլ պայթականների և ձայնեղ պայթականների գրության

և արտասանության տարբերությունների մասին է: Մի կողմ թողած բառակիզբը, որի մասին արդեն խոսել ենք, արևելահայ գրական լեզվում խուլ պայթականները բառամիջում և բառավերջում մնում են անփոփոխ և արտասանվում են որպես խուլ, ինչպես՝ ապրել, ալպակի, ուտել, երկու, երեկ, ան, աճել, այծ, ածել, գուրկ, գուսպ, էակ, լաստ, լճակ, գետակ և այլն:

Սակայն առանձին քերականական աշխատություններում այն դրույթն է զարգացվում, որ, իբր, արևելահայ գրական լեզվում խուլ պայթական Պ, Կ, Տ, Ս, Ծ հնչյունները որոշ դիրքերում արտասանվում են որպես ձայնեղ Բ, Գ, Դ, Ձ, Զ: Մ. Աբեղյանը այս հարցի մասին որոշակիորեն գրում է. «Փակվածքի անձայն Պ, Կ, Տ, Ս, Ծ հնչյունները ձայնորդ Ն, Մ, Բ հնչյուններից հետո արտաբերվում են ընդհանրապես ինչպես ձայնեղ Բ, Գ, Դ, Ձ, Զ, օրինակ՝ ամպ, բաճառ, վաճկ, գաճկ, ընկեր, ընկենի, երկար, երկիր, ընտիր, ճենճուղ, ճանճ— արտասանվում են սովորաբար ինչպես՝ ամբ, բաճդ, վաճգ, գաճգ, ընգնել, երգար, երգիր, ընդիր, ճենճուղ, ճանճ»⁴: Ապա Մ. Աբեղյանը շարունակում է, որ խուլ պայթականների այս շրջումը մի բանի բարբառներում և արևմտահայ գրական լեզվում ընդհանրացել է բոլոր բառերի մեջ, բոլոր դիրքերում, ինչպես որ ընդհանրացած է ձայնեղ պայթականների վերածումը շնչեղ խուլերի. այնպես որ այդ բարբառներն ու արևմտահայ գրական լեզուն ունեն միայն երկու տեսակի պայթական հնչյուններ՝ ձայնեղ Բ, Գ, Դ, Ձ, Զ և շնչեղ խուլ Փ, Բ, Թ, Յ, Զ: Այս հարցադրման կապակցությամբ անդրադառնալով արևելյան բարբառներին՝ Մ. Աբեղյանը նշում է. «Արևելյան բարբառների մեջ ևս երբեմն ուրիշ դեպքերում էլ Պ, Կ, Տ, Ս, Ծ հնչյուններին փոխանակում են ձայնեղ հնչյուններ, օրինակ՝ բնիկ երևանցիների արտասանությամբ այդ անձայն պայթականները երկու ձայնավորի մեջ փոխվում են համապատասխան ձայնեղ հնչյունների, ինչպես՝ գառիկ, ածել, ապրել—գաղիկ, աճել, աբրել. նույնպես արտասանվում են՝ կնիկ, պատ, բայց՝ կնիզը, պաղի»⁵:

Ինչպես տեսնում ենք, Մ. Աբեղյանը այն կարծիքն է հայտնում, որ Արարատյան բարբառում, բացի ձայնորդահաջորդ դիրքից, խուլ պայթականները ձայնեղների են վերածվում նաև միջձայնավորային դիրքերում, օրինակ՝ կնիկ, պատ, բայց՝ կնիզը, պաղի: Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ Արարատյան բարբառի հիմնական խոսվածքում՝ Երևանի խոսվածքում, խուլները ձայնեղների են վերածվում բառամիջի և բառավերջի բոլոր դիրքերում, օրինակ՝ կեբազառ, ճազաղ, կնիզ, պաղ, Պեդրոս, պաբ, տաղ և այլն⁶:

Սակայն մի կողմ թողած այս հարցը՝ մեզ տվյալ դեպքում հետաքրքրում է արևելահայ գրական լեզուն: Անառարկելի պետք է համարել այն, որ արևելյան գրական լեզվի հնչյունական, ինչպես և ձևաբանական համակարգը, բարձրացել է Արարատյան բարբառի հնչյունական և ձևաբանական համակարգի հիմքի վրա: Բայց խուլ պայթականների արտասանության տեսակետից արևելահայ գրական լեզուն տարբերվում է իր ծնող ու սնող բարբառից՝ Արարատյան բարբառից, և դա արտահայտվում է նաև նրանում, որ արևելահայ գրական լեզվում ո՛չ ձայնավորներից հետո և ո՛չ էլ միջձայնավորային դիրքերում ընդհանրապես խուլերի ձայնեղացում չի նկատվում, ինչպես՝

4 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 102:

5 Նույն տեղում, էջ 103:

6 Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 221:

պատ, տատ, պապ, կերակուր, ճակատ, զատիկ, ածել, ապրել, շապիկ, իրիկուն, գիտեմ, գետին, մոտիկ, պատիվ, ցերեկը, ձուկը, դաճակը և այլն:

Ինչպես տեսանք, Մ. Աբեղյանը սահմանել է, որ, ի տարբերություն Արաբատյան բարբառի, խուլ պայթականները արևելահայ գրական լեզվում ձայնեղ են արտասանվում միայն ձայնորդ Մ, Ն, Բ հնչյուններից հետո, օրինակ՝ ամպ>ամբ, բանտ>բանդ, վանկ>վանգ, բնկեր>բնգեր, բնկնել>բնգնել, երկար>երգար, երկիր>երգիր, բնտիր>բնդիր, ճանն>ճանջ, անկողին>անգողին, հարկավոր>հարգավոր, անտառ>անդառ և այլն: Մ. Աբեղյանից հետո այս արտասանությունը որպես նորմա է ներկայացվում նաև Հ. Պետրոսյանի և Գ. Սևակի քերականություններում⁷: Մի առիթով անդադառնալով խուլների ձայնեղացման հարցին՝ Վ. Առաքելյանն այս փոփոխությունը սահմանափակում է միայն Ն-ին հաջորդող դիրքով: Խոսելով որոշ քերականական աշխատություններում տեղ գտած այն կարծիքի մասին, թե ձայնեղների շնչեղ խլացում է նկատվում նաև Ն-ից հետո, օրինակ՝ անգամ>անգամ, անդամ>անքամ և այլն, Վ. Առաքելյանը գրում է, որ Ն-ից հետո մեր լեզվում այժմ ավելի շատ խուլների ձայնեղացում է նկատվում, օրինակ՝ բնծա, բնկնել, բնտրել, բնկեր այժմ շատերը հնչում են բնծա, բնգնել, բնդրել, բնգեր, բայց այսպիսի արտասանությունը գերիշխող չէ և զրական է այս բառերի բնծա, բնկնել, բնտրել, բնկեր արտասանությունը⁸: Ուսումնասիրողն իր մտքերն ամփոփում է հետևյալ կերպ. «Ընդհանրապես պայթական խուլների ձայնեղացումը Ն-ից հետո արևելահայ գրական լեզվում օրինաչափ երևույթ չէ և բարբառային արտասանության ազդեցության արդյունք է»⁹:

Խուլ պայթականների արտասանության հարցը քննարկման նյութ է դարձրել նաև Թ. Ղարաբյուլյանը: Ներկայացնելով գրական արևելահայերենի արտասանության հատկանշական գծերը XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին՝ հեղինակը մեզ հետաքրքրող հարցի մասին գրում է. «Ն, Մ, երբեմն նաև Բ ձայնորդներից հետո խուլ Պ, Կ, Տ, Ս, Ծ հնչյունները մեծ մասամբ արտասանվում էին ձայնեղ Բ, Գ, Դ, Զ, Ը, որը դասագրքերում ներկայացվում էր որպես արտասանական կանոն: Պետք է ասել, որ այսպիսի բառերը հայերենում բավականին շատ էին և շատ դեպքերում հանդես էին գալիս ուղղագրական երկգրություններով, օրինակ՝ Լմպել-Լմբել, վանկ-վանգ, անկողին-անգողին, բնտելանալ-բնդելանալ, անկյուն-անգյուն, անտառ-անդառ, բանտարկել-բանդարկել, երկար-երգար, երկիր-երգիր, հարկավոր-հարգավոր և այլն»¹⁰: Սակայն Թ. Ղարաբյուլյանը ավելի է ընդարձակում խուլների ձայնեղացման ոլորտները՝ գրելով. «Զգալի էր նաև Պ, Կ, Տ, Ս, Ծ խուլների ձայնեղ արտասանությունը հատկապես միջձայնավորային դիրքում (բարբառի ազդեցությամբ), ինչպես՝ զադիկ, շաբիկ, իրիգուն, գիդեմ, մոդիկ, պադիվ, նաև ցերեգը, ձուգը, բուգը, դաճագը և այլն: Այսպիսի հնչումները գրական լեզվում ներկայումս դրսևորվում են մասնակի կերպով և դիտվում են որպես շեղում»¹¹:

7 Հ. Պետրոսյան, Հայոց լեզվի գործնական քերականություն, Երևան, 1928, էջ 13, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 96—97:

8 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955, էջ 129:

9 Նույն տեղում:

10 Թ. Ղարաբյուլյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1974, էջ 57:

11 Նույն տեղում, էջ 58:

Հայ քերականների՝ արևելահայ գրական հայերենի խուլ պայթականների արտասանության մասին արտահայտած կարծիքները կարելի է ամփոփել հետևյալ ձևով: Քերականների մի մասը գտնում է, որ որոշակի դիրքերում, հատկապես ն, օ, ր ձայնորդներից հետո խուլ պայթականներն արտասանվում են որպես ձայնեղ, օրինակ՝ բանտ > բանդ, ամպ > ամբ, երկիր > երգիր և այլն, և դա ներկայացնում է որպես արտասանական նորմա: Մյուս մասը որոշակիորեն այն կարծիքին է, որ խուլ պայթականների ձայնեղացումը որոշակի դիրքերում արևելահայ գրական լեզվի համար արտասանական նորմա է եղել որոշակի շրջանում, ասենք, մինչև XX դ. 30-ական թվականները, որից հետո այդ երևույթը դադարել է, իսկ եթե առանձին դեպքերում դրսևորվում է, ապա ընկալվում ու դիտվում է որպես բարբառային արտասանության ազդեցության արդյունք կամ ուղղակի որպես բարբառային արտասանություն:

Մեր կարծիքով արևելահայ գրական լեզվի խուլ պայթականների արտասանության հարցը հայ քերականական աշխատություններում այնքան էլ ճիշտ չի ներկայացված: Աներկբայորեն կարող ենք պնդել, որ արևելահայ գրական լեզվի զարգացման վերջին շրջանում, գոնե XIX դ. վերջերից ու XX դ. սկիզբներից մինչև մեր օրերը խուլերի ձայնեղ արտասանությունը գրական նորմայի արժեք չի ունեցել և օրինակելի չի եղել: Չսոսկում խուլ պայթականների միջձայնավորային և հոմաձայնավորային դիրքերի ձայնեղ արտասանության մասին, օրինակ՝ կերակուր > կերագուր, ճակատ > ճագադ, պատ > պադ, պապ > պաբ և այլն, որը միշտ էլ ընկալվել է որպես բարբառային արտասանություն, խուլ պայթականների՝ ձայնորդահաջորդ դիրքի ձայնեղ արտասանության մասին պետք է ասել հետևյալը: Եթե արևելահայերենի համար պայմանականորեն ընդունենք ցածր, չեզոք և բարձր արտասանական ոճեր, ապա կարելի է ասել, որ մինչև XIX դ. վերջերը և XX դ. սկիզբները արևելահայերենի ցածր ոճում Արարատյան բարբառի ազդեցությամբ ձայնորդահաջորդ դիրքերում պայթական խուլերը հնչել են որպես ձայնեղներ, օրինակ՝ ամպ > ամբ, բանտ > բանդ, երկար > երգար, երկիր > երգիր, ճարկավոր > ճարգավոր և այլն: Բայց այսպիսի արտասանությունը գրական նորմայի արժեք չի ունեցել: Հետագա շրջանում այս երևույթն աստիճանաբար սահմանափակվելով վերացել է, և եթե այսօր առանձին դեպքերում լսում ենք բանդ, ճանջ, ընդիր, ճարգավոր, ընդրել և նման արտասանություններ, ապա դրանք բարբառի ազդեցության արդյունք են և չեղում գրական լեզվի նորմայից:

Այսպես ուրեմն՝ ժամանակակից արևելահայ գրական լեզվում խուլ պայթականները բոլոր դիրքերում առաստանվում են որպես խուլ, և դա մեր լեզվի առդի փուլում առաստանական կայուն նորմա ու օրինաչափություն է:

Այժմ ձայնեղ պայթականների արտասանության մասին: Որպես ընդհանուր օրինաչափություն, հտգրաբարյան շրջանում ձայնեղ պայթականների զարգացումը բառամիջում և բառավերջում Բ, Ռ, երբեմն նաև Ն, Մ ձայնորդներից հետո ընթացել է այն ուղղությամբ, որ համարյա բոլոր բարբառներում այդ դիրքերում դրանք վերածվել են շնչեղ խուլերի: Հասկանալի է, որ Արարատյան բարբառի հիմքի վրա բարձրացած արևելահայ գրական լեզվի հնչունական համակարգը պետք է որ արտացոլեր այս փոփոխությունն ու զարգացումը: Եվ իրոք, արևելահայ գրական լեզվում ձայնեղ պայթական Բ, Գ, Դ, Զ, Ը հնչյունները բառամիջում և բառավերջում ձայնավորներից և Բ ու Ռ,

երբեմն բառերի մեջ նաև ն ձայնորդից հետո դառնում են ընդհանրապես ֆ, ֆ, ֆ, ֆ, ֆ շնչեղ խուլեր, օրինակ՝ երբ>երփ, հարբել>հարփել, որբ>որփ, խարել>խարփել, երգ>երգփ, կարգ>կարգփ, ավագ>ավագփ, մարդ>մարդփ, եւագ>եւագփ, բուրդ>բուրդփ, երդվել>երդվփել, ջարդել>ջարդփել, բարձ>բարգ, բարձր>բարգր, խուրձ>խուրց, օձ>օց, վերջ>վերջ, արջ>արջ, աջ>աչ և այլն:

Հայ քերականական աշխատություններում, որպես կանոն, այն տեսակետն է դարգացվում, որ ձայնեղների շնչեղ խլացումը լեզվի ժամանակակից փուլում մեռած մի օրինաչափություն է, և շնչեղ խուլերը ետագարձ շարժում են կատարում դեպի ձայնեղները: Բայց այն փաստը, որ ձայնեղների շնչեղ խլացման երևույթը դրսևորվում է ոչ միայն ժողովրդական խոսակցական բառերի մեջ, ինչպիսիք վերևում բերվածներն են, այլև գրական բառերի մեջ, ինչպես՝ միւրգ>միւրգփ, ձերբակալել>ձերբակալփել, հորդորել>հորդորփել, հաղորդել>հաղորդփել, բարդ>բարդփ, դերձակ>դերցակ, դոդել>դոդփել, երիտասարդ>երիտասարդփ, երջանիկ>երջանիկ, նորոգել>նորոգփել, նուրբ>նուրփ, վարագույր>վարագույրփ, առանձին>առանցին, արդարև>արքարև և այլն, բավական պերճախոս վկայում է, որ պայթական ձայնեղների շնչեղ խլացումը պատմական մեռած օրինաչափություն չէ և այս կամ այն չափով դորժում է նաև լեզվի արդի փուլում:

Մյուս կողմից՝ ժողովրդական-խոսակցական բառերում տեղի ունեցած ձայնեղ պայթականների շնչեղ խլացումը գրական լեզվի համար արտասանական նորմա է, ինչպես՝ երբ>երփ, որբ>որփ, կարագ>կարագփ, բուրդ>բուրդփ, երդվել>երդվփել, խուրձ>խուրց, վերջ>վերջ, արջ>արջ, աջ>աչ և այլն, և այս տիպի բառերի գրային արտասանությունները (երբ, որբ, կարագ և այլն), որպես անհատական շեղումներ, գրական լեզվի ուղղախոսություն մերժվում են: Սրանից ինքնին բխում է, որ չի կարելի ընդունել հայ քերականություններում տարածված այն դրույթը, թե շնչեղ խուլերը ետագարձ շարժում են կատարում դեպի ձայնեղները: Այս տեսակետը ճիշտ կհամարվեր այն դեպքում, երբ, ասենք, կարդուլ, մարդ, արջ, խուրձ, խարել, բարձ, բարձր, ջարդել և նման բառերը արտասանվեին ըստ դրույթյան՝ կարդալ, մարդ, արջ, խուրձ և այլն, այնինչ այսպիսի արտասանությունները բարբառների ազդեցության, հայերենին լավ չտիրապետելու կամ հայերենը գրքով սովորելու արդյունք են:

Ինչևիցե, համառոտ ներկայացնելով ձայնեղների շնչեղ խլացման երևույթը, նշենք, որ դա արդի հայերենի հնչյունական համակարգի ամենահատկանշական ու ամենահետադրժրական երևույթներից մեկն է և կարող է առանձին ծավալուն ուսումնասիրության նյութ հանդիսանալ:

ПРОИЗНОШЕНИЕ ВЗРЫВНЫХ СОГЛАСНЫХ ВОСТОЧНОАРМЯНСКОГО ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА

МАНВЕЛ АСАТЯН

Резюме

В специальной литературе развивается положение о том, что в восточноармянском литературном языке в определенных позициях глухие взрывные ֊, Կ, Տ, Ծ произносятся как звонкие Բ, Գ, Դ, Զ, Ը (ամպ>

աճր, ընկեր > ընգեր, երկիր > երգիր). Однако это произношение есть результат влияния Арабатского диалекта и не может быть представлено в качестве обязательной языковой нормы литературного языка.

В современном литературном языке глухие взрывные согласные во всех позициях произносятся как глухие, и это произношение на современном этапе развития языка является устойчивой нормой и закономерностью.

Некоторые лингвисты считают, что оглушение-аспирация звонких взрывных на современном этапе развития языка является вымершей исторической закономерностью, и глухие придыхательные совершают обратное движение к звонким. Однако оглушение-аспирация звонких взрывных распространяется не только на народно-разговорные слова (երր > երր, երգ > երք, բարձր > բարքր, արշ > արշ), но и на литературные (ձերբախտիչ > ձերբախտիք, միրգ > միրք, երշնիկ > երշնիք, ասանձին > ասանքին). Это говорит о том, что явление оглушения-аспирации взрывных звонких наблюдается и на современном этапе развития языка.